1.qxd 13/01/2025 18:01 Page 1

ԳԵՂԱՄԱ ՏԱՐԵՄՈՒՏ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 13 հունվարի 2025թ. թիվ 1 (605)

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԽՈՍՔԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի հայրենակիցներ, քիչ անց մենք հրաժեշտ ենք տալու հերթական անցնող տարվան՝ 2024 թվականին, որը Գեղարքունիքի մարզի պատմության մեջ կմնա որպես տնտեսական առաջընթացի, ենթակառուցվածքների զարգացման ու հայրենաշինության տարի:

Բավական է նկատել, որ 2024 թվականին Գեղարքունիքի մարզում կապիտալ ներդրումները կազմել են շուրջ 25 միլիարդ դրամ, ինչի շնորհիվ մեր համայնքների բնակավայրերում կառուցվել է 61200 գծամետր խմելու ջրագիծ, 34900 գծամետր ոռոգման ցանց, 61300 գծամետր լուսավորության ցանց եւ 2900 գծամետր գազատար:

Հիմնանորոգվել կամ միջին նորոգման է ենթարկվել 125,2 կիլոմետր երկարության միջպետական, հանրապետական, մարզային ու համայնքային նշանակության ճանապարհներ, սալարկվել 6200 գծամետր համայնքային նշանակության փողոցներ եւ մայթեր:

Հիմնանորոգվել են 10 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներ, կառուցվել կամ հիմնանորոգվել 3 կամուրջ:

Ավարտվել կամ ավարտական փուլում են գտնվում Վարդենիկի, Երանոսի, Լիճքի, Զորագյուղի, Ճամբարակի թիվ 3, Ծովասարի, Վարդենիսի Բանավանի եւ Գավառի թիվ 7, Սարուխանի թիվ 1, Աստղաձորի, Վարդենիկի Բանավան թաղամասի մանկապարտեզների, Սեւանի երաժշտական դպրոցի շինարարական եւ գույքով համալրման աշխատանքները:

Շարունակվել են Բերդկունքի եւ Գեղամասարի մանկապարտեզների, Գեղհովիտի թիվ 2, Ներքին Գետաշենի թիվ 1, Ջիլի, Շատջրեքի միջնակարգ, Ճամբարակի թիվ 1, Լեռնակերտի հիմնական դպրոցների եւ Լճափի ԱԱՊԿ-ի կառուցման աշխատանքները, իսկ Վերին Գետաշենի թիվ 2, Գագարինի եւ Ակունքի միջնակարգ դպրոցների մարզադահլիճների կառուցման աշխատանքները գտնվում են ավարտական փուլում եւ շահագործման կհանձնվեն 2025 թվականի ընթացքում:

ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում հաստատվել է 25 դպրոցների կառուցման եւ հիմնանորոգման աշխատանքները (10 կրթահամալիր, 8 դպրոցների կարուցում եւ 7 դպրոցների հիմնանորոգում կամ վերանորոգում), որոնցից մեկնարկել են Մադինայի, Կախակնի եւ Փոքր Մասրիկի կրթահամալիրների կառուցման եւ Վաղաշենի դպրոցի հիմնանորոգման աշխատանքները:

2024 թվականին նախադպրոցական տարիքի հարյուրավոր երեխաների առջեւ իրենց դռները բացեցին արդի չափորոշիչներին համապատասխանող Զոլաքարի եւ Ծովինարի մանկապարտեզները:

Անհետաձգելի համարվող ծրագրերի համար պետական բյուջեից հատկացված 361,5 միլիոն դրամի շրջանակներում հաջողվեց կարգավորել առաջնահերթ լուծում պահանջող մի շարք հիմնախնդիրներ, որոնցից մեկն էլ 2022 թվականի սեպտեմբերյան ագրեսիայի հետեւանքների վերացումն էր, որը եւ կարողացանք իրողություն դարձնել Սոթք բնակավայրում թվով 4 անհատական բնակելի տների կառուցմամբ ու շահագործմամբ:

Լուրջ ու տեսանելի զարգացում ապրեց մարզի առողջապահական համակարգը: Մեր բուժհիմնարկները ոչ միայն դարձել են ինքնաբավ, այլ նաեւ ստեղծում են նոր կարողություններ ու խնայողություններ, որոնք ուղղվում են ոլորտի շարունակական զարգացմանն ու առաջընթացին:

Տարին չափազանց նպաստավոր էր նաեւ մասնավոր ներդրումային ծրագրերի իրականացման առումով:

Իրականացված հսկայածավալ ներդրումների եւ կարեւորագույն կառույցների շնորհիվ Գեղարքունիքի մարզում լուծում են ստացել այնպիսի հիմնախնդիրներ, որոնք անլուծելի են մնացել տասնամյակներ շարունակ:

Էապես բարելավվել են բնակչության կենսապայմանները, հզորացվել ու արդիականացվել ենթակառուցվածքները, ստեղծվել են նոր աշխատատեղեր:

2025 թվականին մեզ սպասում են հայրենաշեն նոր ու խոշոր ծրագրեր ենթակառուցվածքների զարգացման, հանրակրթության, առողջապահության, գյուղատնտեսության, կապիտալ շինարարության եւ այլ ոլորտներում, որոնց կենսագործմամբ մենք կշարունակենք քայլ առաջ կատարել դեպի նոր ու հզոր, խաղաղ ու բարեկեցիկ Հայաստանի կերտումը:

Մնում է, որ բոլորս մեր հայրենիքի լուսավոր գալիքների նկատմամբ շարունակենք զինվել հույսով, հավատով, սիրով ու նվիրումով, միաբանության անսասան կամքով:

Նույն հավատով ու սիրով էլ շնորհավորում եմ հայրենի հողին կյանք ու արարում պարգեւող մարդկանց Ամանորն ու Սուրբ ծննդը, մաղթում քաջառողջություն, երկար տարիների երջանիկ ու խաղաղ կյանք, հզոր ու ծաղկուն պետություն, համահայկական նպատակների իրագործում, նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

Լավագույն ցանկություններով՝
ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
Կարեն Սարգսյան

ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ ՏԵՐ ՊԱՐԹԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲՄԵՂՅԱՆԻ ԱՄԱՆԱՆՈՐՅԱ ԵՎ ՍՈՒՐԲԾՆՆԴՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Սիրելի հավատացյալ ժողովուրդ Գեղամա աշխարհի, Ամանորի եւ Սուրբ Ծննդյան ուրախ առիթներով մեր ջերմագին շնորհավորանքներն ենք բերում Ձեզ եւ հղում ամենայն բարյաց մեր մաղթանքները:

Տարեմուտի շեմին հուսառատ են մեր սրտերը եւ լավատես՝ մեր սպասումները եկող 2025 թվականից: Հնի եւ նորի այս հանգրվանին ամփոփում ենք թեմական կյանքից ներս ազգային-եկեղեցական անդաստանում իրականացրած մեր առաքելության բարի արդյունքները, անդրադառնում բացթողումներին եւ ինքնաքննությամբ մուտք գործում նոր փրկչական տարի:

Տոնական այս օրերին մեր սրտերն ու հոգիները համակված են Մանկացյալ Աստվածորդու հրաշափառ Սուրբ Ծնունդը եւ Աստվածահայտնությունը տոնախմբելու մեծագույն բերկրանքով, որը հոգեւոր մխիթարություն է եւ հավատքի զորության աղբյուր հավատացելոց համար. «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկաս 2:14):

Լիահույս ենք, որ Մանուկ Հիսուսի աշխարհ բերած հոգենորոգ եւ կենարար խորհրդով գոտեպինդ եւ Տիրոջ երկնառաք շնորհներով զարդարյալ, պիտի հաղթահարենք ազգային կյանքի դժվարությունները, որպեսզի փարատվեն մեր երկրի անվտանգության մտահոգությունները, եւ աստվածասեր մեր ժողովուրդը խաղաղ, ապահով եւ ստեղծագործ ընթացքով շենացնի հայրենի մեր երկիրը:

Մխիթարական այս մտածումներով աղոթքով եւ անմոռաց երախտագիտությամբ ենք հիշում ի պաշտպանություն հայրենյաց սահմանների նահատակված մեր քաջարի հայորդիներին՝ Սուրբ Հոգու մխիթարությունը հայցելով նրանց ընտանիքներին: Առ Աստված աղոթքով հայցում ենք նաեւ Տիրոջ օգնականությունը գերյալ մեր եղբայրներին՝ հուսալով այս տարի Հայրենիք նրանց վերադարձին:

Մեր ամանորյա մաղթանքն է ձեզ եւ մեր արցախցի քույրերին ու եղբայրներին, որ Բարին Աստված պարգեւի ամենքիդ կենաց արեւշատություն եւ հաջողություններ՝ ի խնդիր ձեր ընտանիքների բարեկեցության եւ երջանկության, մեր մարզի զորացման եւ մեր երկրի բարգավաճման:

Թող Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության խորհրդով սկիզբ առնող Նոր Տարին մեր Հայրենիքի եւ ժողովրդի համար լինի խաղաղ, ապահով եւ առատ օրհնաբեր տարի:

Շնորհավոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ

ՏԱՐԵՄՈՒՏԻՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆՆ ԱՅՑԵԼԵՑ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԴԻՐՔԵՐ

Դեկտեմբերի 30-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը ՀՀ ԶՈՒ երկրորդ բանակային կորպուսի հրամանատարի եւ Վարդենիս խոշորացված համայնքի ղեկավարի ուղեկցությամբ այցելեց առաջնագծում մարտական հերթապահություն իրականացնող մեր սպաներին ու զինվորներին:

Մարզպետը շնորհավորեց Հայոց բանակի զինվորներին ու սպաներին Ամանորի եւ Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ, մաղթեց քաջառողջություն, խաղաղ ու անվտանգ ծառայություն:

1.qxd 13/01/2025 18:01 Page 2

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՏԱՐԵՄՈՒՏԻՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ Է ԱՆՑԿԱՑՐԵԼ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՆՀՐԱՊԱՐԱԿՆԵՐՈՒՄ

2024 թվականի դեկտեմբերի 25-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի հետ մշտադիտարկում անցկացրեց Ծովինար, Զոլաքար, Աստղաձոր գյուղերի շինհրապարակներում:

Մշտադիտարկման առաջին կանգառը Ծովինարի մշակույթի տան հարակից տարածքում կառուցվող զբոսայգու շինհրապարակում էր, որտեղ շինարարական աշխատանքներն ընթանում են ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ծովինարի զբոսայգու կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 19 միլիոն դրամ, որի 65 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 35 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Ծովինարի մշակույթի տան հարակից հրապարակի սալիկապատում, կանաչապատում, ծառատնկում, ցայտաղբյուրի եւ լուսավորության համակարգի կառուցում, նստարանների տեղադրում:

Նոյեմբերի սկզբից մեկնարկած շինարարական աշխատանքներն արդեն իրականացվել են շուրջ 70 տոկոսով:

Ծրագրի իրականացման արդյունքում Ծովինար գյուղը կունենա ժամանակակից զբոսայգի, գեղեցիկ տեսք կստանա մշակույթի տան հրապարակը:

Մշտադիտարկման երկրորդ կանգառը Աստղաձոր եւ Զոլաքար գյուղերով անցնող մարզային նշանակության ճանապարհի փլվածքների վերականգնման շինհրապարակում էր, որտեղ արդեն ավարտվում են շինարարական աշխատանքները ՀՀ կառավարության կողմից հատկացված 22 միլիոն 675 հազար դրամ գումարի շրջանակներում:

Մարտունի-Վարդենիկ մարզային նշանակության ավտոճանապարհի՝ Աստղաձոր եւ Զոլաքար բնակավայրերով անցնող առանձին տեղերում հողային պաստառի փլուզման հետեւանքով քանդվել էին մայթերի որոշակի հատվածներ, ու կանխարգելիչ միջոցառումներ չձեռնարկելու դեպքում կվտանգվեր նաեւ ավտոճանապարհի ջրահեռացման համակարգը եւ ճանապարհի երթեւեկելի մասի հողային պաստառը:

Խնդիրը Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կողմից ներկայացվել էր ՀՀ կառավարության ուշադրությանը՝ նախօրոք կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերով: Հարցը ստացել էր դրական լուծում, գումարը հատկացվել էր այս տարվա հոկտեմբերին:

Ճանապարհի վնասված ընդհանուր հատվածները կազմում էին 96 գծամետր, որոնց վերականգնման համար կառուցվել է հենապատ՝ գաբիոնային շարվածքի միջոցով, 558 խորանարդ մետր ընդհանուր ծավալով:

Աստղաձոր եւ Զոլաքար գյուղերով անցնող մարզային նշանակության ճանապարհի փլվածքներն արդեն ամբողջությամբ վերականգնված են:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է 2025 ԹՎԱԿԱՆԻ ԶՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ

Գեղարքունիքի մարզում 2025 թվականի ձմեռային զորակոչի մեկնարկը տրվել է Մարտունի եւ Վարդենիս համայնքներից:

Նորակոչիկներին բանակ ճանապարհելու արարողություններին մասնակցել են ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալները, Մարտունի եւ Վարդենիս համայնքների ղեկավարները , ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Գեղարքունիքի տարածքային ստորաբաժանման եւ համայնքապետարանների աշխատակիցներ, ուժային կառույցների ներկայացուցիչներ, Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի հոգեւոր դասի անդամներ, նորակոչիկների ծնողներ եւ հարազատներ:

Նորակոչիկներին Հայոց բանակի շարքերը համալրելու կապակցությամբ շնորհավորել եւ բարեմաղթանքի խոսքեր են հղել Գեղարքունիքի մարզպետի տեղակալներ Ջանիկ Բազեյանը եւ Վահան Զարոյանը, Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը, Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը, ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Գեղարքունիքի տարածքային ստորաբաժանման ղեկավար Արմեն Մնացականյանը:

Բանակ մեկնելուց առաջ նորակոչիկները ստացել են Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի հոգեւոր հայրերի օրհնությունը:

Առաջիկա օրերին ձմեռային զորակոչը կմեկնարկի նաեւ Գավառ, Սեւան եւ Ճամբարակ համայնքներում:

Ձմեռային զորակոչը Գեղարքունիքի մարզում կշարունակվի մինչեւ 2025 թվականի հունվարի 31-ը:

ԳԱՎԱՌԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԵՑ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Հունվարի 6-ին Գավառի առաջնորդանիստ Սուրբ Աստվածածին եկեղեցում՝ Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առթիվ, մատուցվեց Սուրբ Պատարագ՝ ձեռամբ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Պարթեւ եպիսկոպոս Բարսեղյանի՝ աղոթակցությամբ Գավառի հոգեւոր հովիվ Տեր Նշան քահանա Սարգսյանի եւ Գավառի հարակից համայնքների հոգեւոր հովիվ Տեր Շահան քահանա Մովսիսյանի:

Պատարագի ընթացքում ընթերցվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական պատգամը:

Պատարագի ավարտին կատարվեց Ջրօրհնյաց կարգ, եւ օրհնված ջուրը բաժանվեց ներկա հավատացյալներին:

Այս տարի Գավառի Սուրբ Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցում Ջրօրհնյաց խաչեղբայրությունն ստանձնեց Տիար Արշակ Մարտիրոսյանը:

Ջրօրհնեքի ավարտին Գերաշնորհ Սրբազան Հայրը շնորհավորեց ներկա հավատացյալներին եւ վերստին Սուրբ Ծննդյան ավետիսը բերեց՝ մաղթելով, որ օրհնված ջուրը հոգեւոր ու մարմնավոր բժշկություն պարգեւի ամենքին, մաքրությամբ, սիրով եւ խաղաղությամբ լցնի նրանց հարկերը, եւ մանուկ Հիսուսի Ծննդյան ավետիսը բարօր ու անսասան պահի հայրենի մեր երկիրը:

ՎԵՐԱԶԻՆՎՈՒՄ ՈՒ ԶԱՐԳԱՆՈՒՄ Է ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը աշխատանքային այց կատարեց Գավառի բժշկական կենտրոն՝ տեխնիկական վերազինումների եւ արեւային ֆոտովոլտային կայանի տեղադրման աշխատանքների ընթացքին ծանոթանալու նպատակով:

Մարզպետը շրջայց կատարեց հեմոդիալիզի բաժանմունքում, համակարգչային շերտավորման սարքի տեղադրման նպատակով վերակառուցվող տարածքում եւ արեւային ֆոտովոլտային կայանի տեղադրման շինհրապարակում, զրուցեց բուժանձնակազմի եւ շինարարների հետ, իսկ տնօրինության հետ քննարկեց առաջնահերթ լուծում պահանջող մի շարք հարցեր:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամի եւ Գավառի բժշկական կենտրոնի միջեւ կնքված պայմանագրի համաձայն՝ Գավառի ԲԿ շենքի տանիքին տեղադրվում է 150 կիլովատտ ժամ հզորության արեւային ֆոտովոլտային կայան, որը ոչ միայն լիովին կբավարարի հաստատության էներգետիկ կարիքները, այլ կձեւավորվի տարեկան շուրջ 13 միլիոն դրամի խնայողություն:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի դեկտեմբերի 20-ից եւ կավարտվեն 2025 թվականի հունվար ամսի ընթացքում:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 20 միլիոն 591 հազար դրամ, որի 20 տոկոսը ներդրում է Գավառի բժշկական կենտրոնը, 80 տոկոսը՝ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամը:

Գավառի ԲԿ հեմոդիալիզի բաժանմունքը վերջերս է վերազինվել նորագույն 5 ապարատներով եւ լաբորատորիայի ֆիլտրերով: Նորագույն երկու ապարատները ձեռք են բերվել Գավառի համայնքապետարանի կողմից հատկացված 9,6 միլիոն դրամ դրամաշնորհի շրջանակներում, մյուս երեք ապարատները՝ Գավառի ԲԿ կողմից տնտեսված 14,4 միլիոն դրամի հաշվին:

Եվս 2 միլիոն դրամ հատկացվել է ֆիլտրող սարքերի ձեռքբերման համար:

Համակարգչային շերտագրման սարքի տեղադրման նպատակով վերակառուցվող տարածքի շինարարական աշխատանքների համար Գավառի ԲԿ տնտեսված միջոցներից հատկացվել է 8,8 միլիոն դրամ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի դեկտեմբերից եւ ավարտի կհասցվեն 2025 թվականի հունվարի վերջերին:

Համակարգչային շերտագրման սարքը ձեռք կբերվի ՀՀ կառավարության կողմից տրամադրված միջոցների հաշվին:

-Գավառի ԲԿ տանիքին արեւային ֆոտովոլտային կայանի տեղադրմամբ մենք ստեղծում ենք հաստատուն կարողություններ, որոնք ուղղելու ենք բուժհաստատության շարունակական զարգացմանն ու առաջընթացին: Սրանով մի կողմից լուծվում է հաստատության էներգետիկ ինքնաբավության խնդիրը, մյուս կողմից ձեւավորվում է նկատելի գումարի խնայողություն, որի հաշվին կիրականացվեն տեխնիկական վերազինման նոր ծրագրեր, կներդրվեն բժշկական նոր ծառայություններ: Ինչպես տեղում հավաստեցին հեմոդիալիզի բաժանմունքի սպասարկող բժիշկները՝ նորագույն ապարատների ձեռքբերման շնորհիվ արդեն էապես բարձրացել է բուժսպասարկման որակը, նկատելի են դրական փոփոխությունները:

Առաջիկայում նոր ձեռքբերումներ կարձանագրվեն նաեւ մյուս բաժանմունքներում,-շրջայցի ավարտին իր տպավորություններով կիսվեց Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

«Գեղամա աշխարհ»

1.qxd 13/01/2025 18:01 Page 3

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՀՀ-ՈՒՄ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՈՀԱՄՄԱԴ ԱՍԱԴԻ ՄՈՎԱՀԵԴԻՆ

Գավառի պետական համալսարան է այցելել Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության մշակույթի կենտրոնի ղեկավար Մոհամմադ Ասադի Մովահեդին:

Պատվավոր հյուրին ողջունել են Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը եւ պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

Կայացաել է հանդիպում բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի ներկայացուցիչների եւ ուսանողների հետ:

Քննարկվել են հայ-իրանական բազմադարյան պատմամշակութային կապերն ու առնչությունները, անդրադարձ է կատարվել իրանական եւ հայկական պոեզիային ու փիլիսոփայությանը, կարեւորվել համագործակցությունը մշակույթի, կրթության եւ գիտության ոլորտներում:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանում ԻԻՀ մշակույթի կենտրոնի եւ Գավառի պետական համալսարանի գործակցության հնարավորությունները՝ համատեղ ծրագրերի մշակման եւ իրականացման, ուսանողների փոխանակման, միջմշակութային հաղորդակցության զարգացման ուղղություններով:

Այցի ավարտին Մոհամմադ Ասադի Մովահեդինը ծանոթացել է Գավառի պետական համալսարանի Վարշամ Ավետյանի անվան պատմագիտական թանգարանի ցուցանմուշներին:

ԳՊՀ տեղեկատվության բաժին

ԿՄԽԿ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱԽՊՐԱԶՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԱՊՐՈՂ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆ ԱՊԱՀՈՎՎԵԼ Է ԲՆԱԿԱՐԱՆՈՎ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ախպրածոր գյուղում բնակվող Վյաչեսլավ Գաբրիելյանի բազմազավակ ընտանիքը Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի աջակցությամբ տեղում ապահովվել է բնակարանով:

Ինչպես տեղեկացրեց Ախպրածորի վարչական ղեկավար Լավրենդիկ Ղազարյանը,Վյաչեսլավ Գաբրիելյանի ընտանիքում մեծանում են հինգ անչափահաս երեխա, որոնցից երեքը դպրոցական են, իսկ երկուսը՝ նախադպրոցական տարիքում:

-Վյաչեսլավի հայրական ընտանիքը եւս բազմաշունչ է, մյուս եղբայրները եւս բնակարանի խնդիր ունեին: Վյաչեսլավն ընտանքը պահում է արտագնա աշխատանքով, կինը տնային տնտեսուհի է: ԿՄԽԿ աջակցությամբ, 3,5 միլիոն դրամի շրջանակներում, նա վերջերս Ախպրածորում ձեռք է բերել նոր բնակարան, որի արժեքը, ըստ կնքված պայմանագրի, պետք է մարի 20 տարվա ընթացքում: Ամսական Վյաչեսլավը մուծում է 14 հազար դրամ: Ինչ խոսք, սա շատ կարեւոր օժանդակություն էր սահմանամերձ բնակավայրում ապրող բազմաշունչ ընտանիքի համար: Ծրագիրն իրականացվել է Վարդենիսի համայնքապետարանի հետ համագործակցությամբ,-ներկայացրեց Ախպրածորի վարչական ղեկավարը:

Վերջերս Վյաչեսլավի ընտանիքին այցելել է Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ նրանց անվճար հատկացնելով վառելափայտ:

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՎԱՂԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ

Արդեն մեկնարկել եւ ընթանում են Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վաղաշեն գյուղի միջնակարգ դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրեց Վաղաշենի միջնակարգ դպրոցի տնօրեն Լաուրա Սուվարյանը, շինարարական աշխատանքների իրականացման պայմանագրային ածեքը կազմում է 187 միլիոն 200 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվել է պետբյուջեի միջոցներից: Ծրագրով նախատեսված է հատակի եւ տանիքի, սանհանգույցների, կոյուղագծի, ջրամատակարարման ներքին ցանցի նորոգում, նոր դռների տեղադրում, պատերի ներքին ու արտաքին հարդարում, ներկում, մարզադահլիճի ջերմամեկուսացում: Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտի հասցնել 240 օրվա ընթացքում:

-Հիմնանորոգման աշխատանքները կազմակերպվում են այնպես, որ դպրոցում դասապրոցեսը որեւէ կերպ չխանգարվի: Այդ նպատակով էլ շինարարական աշխատանքները սկսվել են առաջին մասնաշենքում, իսկ դասապրոցեսն ընթանում է երկրորդ մասնաշենքում: Երբ ամբողջությամբ ավարտվեն աշխատանքներն առաջին մասնաշենքում, մենք դասերն արդեն կանցկացնենք այնտեղ, իսկ շինարարարությունը կսկսվի երկրորդ մասնաշենքում, մինչեւ որ շենքի հիմնանորոգումը կավարտվի ամբողջությամբ,-ներկայացրեց դպրոցի տնօրենը:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Նորոգշին» ՍՊԸ-ն:

Խոսրով Խլղաթյան

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 5 ԳՅՈՒՂԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ ԱՐԴԵՆ ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԵՆ ՀՈԳՈՒՄ ԻՐԵՆՑ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոսի, Լիճքի, Ներքին Գետաշենի, Վարդենիկի եւ Ծովինարի մանկապարտեզներն իրենց տանիքներին տեղադրված արեւային ֆոտովոլտային կայանների շահագործման շնորհիվ արդեն երկու ամիս է, ինչ սեփական միջոցներով են հոգում էներգետիկ կարիքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, արեւային ֆոտովոլտային կայանների կառուցման ծրագիրն իրականացվել է Մարտունու համայնքապետարանի եւ Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության համագործակցության արդյունքում:

Ծրագրի արժեքը կազմել է 26 միլիոն 400 հազար դրամ, որի 5 միլիոն դրամը ներդրել է Մարտունու համայնքապետարանը, 21 միլիոն 400 հազար դրամը՝ Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերությունը:

Ծրագրի մեկնարկը տրվել է 2024 թվականի մարտ ամսին եւ ավարտվել հոկտեմբերին: Նոյեմբեր ամսից արեւային ֆոտովոլտային 5 կայանները միացվել են բաշխիչ ցանցին:

25-ական կիլովատտ ժամ էներգիա ապահովում են Երանոսի եւ Լիճքի, 20-ական կիլովատտ ժամ՝ Ներքին Գետաշենի, Վարդենիկի եւ Ծովինարի մանկապարտեզներում տեղադրված արեւային ֆոտովոլտային կայանները:

-Այս ծրագրի իարկանացումից հետո մեր հինգ մանկապարտեզները անցել են կայուն էներգախնայողության ու ոչ միայն սեփական միջոցներով են հոգում իրենց բոլոր էներգետիկ ծախսերը, այլ նաեւ ունենում են խնայողություններ՝ 110 կիլովատտ ժամ ընդհանուր հզորության դիմաց տարեկան խնայելով շուրջ 8-9 միլիոն դրամ,-ներկայացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

Խոսրով Խլղաթյան

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆ ԸՆԴՈՒՆԵԼ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ԲԱԶԿԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆԻՆ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանն ընդունել է բազկամարտի աշխարհի չեմպիոն Ազատ Սրապյանին:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, 2024 թվականի օգոստոսի 25-ին Մոլդովայի մայրաքաղաք Քիշնեւում կայացած բազկամարտի աշխարհի առաջնությանը 70 կգ քաշային կարգում Մարտունի համայնքի բնակիչ Ազատ Սրապյանն աջ ձեռքով հաղթել է մրցակցին՝ ճանաչվելով աշխարհի չեմպիոն, իսկ ձախ ձեռքով նվաճել բրոնզե մեդալ:

Հոկտեմբերի 1-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով Ազատ Սրապյանին շնորհվել է «ՀՀ միջազգային կարգի Սպորտի վարպետ» եւ «ՀՀ սպորտի վարպետ» մարզական կոչումները:

Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը շնորհավորել եւ քաջալերել է չեմպիոնին՝ վաստակած հաղթանակների եւ կոչումների արաժանանալու առթիվ, ինչպես նաեւ հետաքրքրվել մարզիկի հետագա ծրագրերով:

Ազատ Սրապյանը հայտնել է, որ ցանկություն ունի Մարտունի համայնքում զարգացնել ու մասսայականացնել բազկամարտը: Չեմպիոնի տեսլականը համայնքի ղեկավարի կողմից արժանացել է հավանության, իսկ, փոխադարձ պայմանավորվածությամբ, առաջիկայում համայնքապետարանի աջակցությամբ Մարտունի համայնքում կկազմակերպվի Հայաստանի բազկամարտի մինչեւ 18 տարեկանների հանրապետական առաջնություն:

Ազատ Սրապյանը Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի կողմից արժանացել է շնորհակալագրի եւեւդրամական պարգեւի:

1.qxd 13/01/2025 18:01 Page 4

ԳԱՎԱՌԻ ՀԵՆՐԻԿ ԹԱԼԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԸ ՄՐՑԱՆԱԿՆԵՐՈՎ ԵՆ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻՑ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Հենրիկ Թալալյանի անվան երաժշտական դպրոցի սաները 2024 թվականի վերջին կիսամյակում նկատելի հաջողություններ են գրանցել միջազգային տարբեր մրցույթներում:

Վերջերս դպրոցի դհոլահարների համույթը Եգիպտոսում մասնակցել է «INSPIRATION» միջազգային մրցույթ-փառատոնին եւ արժանացել բարձրագույն մրցանակի:

Դհոլահարների համույթի կազմում են եղել Ալեն Ղարիբյանը, Հրանտ Գալոյանը, Գոռ Վարդանյանը, Վազգեն Մնեյանը , Մայիս Գալստյանը, Ալեն Հակոբյանը, Ռուդիկ Խաչատրյանը, Ռաֆայել Թադեւոսյանը, Աշոտ Հակոբյանը, Համլետ Հայրապետյանը, Մարկ Հաֆտոյանը, Ռաֆֆի Սենոքյանը, Օթելլո Առաքելյանը, Հրանտ Պարոնյանը եւ Գագիկ Գասպարյանը:

Իսկ նույն հաստատության Կարեն Սիրականյանի դասարանի երեք դուդուկահարներ էլ՝ Արմեն Օհանյանը, Հովհաննես Ասլիկյանը եւ Ալեն Հակոբյանը, արդեն առցանց տարբերակով մասնակցել են նույն միջազգային մրցույթ-փառատոնին եւ համապատասխանաբար արժանացել Գրան Պրի եւ 1-ին մրցանակների:

«Golden Voice» միջազգային մրցույթ-փառատոնին էլ մասնակցել են վոկալի բաժնի սաներ Աննա Սիրականյանը, Մանե Հակոբյանը, Միլենա Սիրականյանը, Լիլյա Սիրականյանը եւ Արիաննա Հովհաննիսյանը (դասատու՝ Աննա Գզրարյան): Աշակերտներն արժանացել են Գրան Պրի, 1-ին եւ 2-րդ մրցանակների:

Երաժշտական դպրոցի տարբեր բաժինների սաներ Երեւանում մասնակցել են Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում տեղի ունեցած ,Մոցարտե 6-րդ միջազգային մրցույթ-փառատոնին եւ արժանացել երեք Գրան Պրի, 15 առաջին եւ 5 երկրորդ կագի մրցանակների:

-Դպրոցի այս հաջողությունները նաեւ մանկավարժների ջանադիր ու հետեւողական աշխատանքի արդյունքն է, ինչը ոգեւորում է եւ՝ դպրոցի սաներին, եւ՝ նրանց ծնողներին,-նշեց երաժշտական դպրոցի տնօրեն Արփինե Զարգարյանը:

Ալվարդ Մանուկյան

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԿԱԶՄԵԼ ԵՆ ՇՈՒՐՋ 11,5 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում ամփոփվել են 2024 թվականի աշխատանքային ու տնտեսական ձեռքբերումները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, 2024 թվականին պետության եւ համայնքի կողմից Մարտունի համայնքում կատարված կապիտալ ներդրումները կազմել են շուրջ 11,5 միլիարդ դրամ, որի արդյունքում համայնքի բնակավայրերում հիմնանորոգվել է 14 կիլոմետր միջպետական, 19 կիլոմետր ներհամայնքային նշանակության ավտոճանապարհներ, բազմաբնակարան 5 շենքերի տանիքներ, 5 մանկապարտեզների բակային տարածքներ, կառուցվել 47 կիլոմետր ոռոգման, 30 կիլոմետր խմելու ջրատարներ, 24 կիլոմետր լուսավորության ցանց, 6750 մետր գազատար, 9600 քառակուսի մետր սալարկված մայթեր, 1 Փառքի հուշահամալիր, շարունակվել են Ներքին Գետաշենի թիվ 1, Գեղհովիտի թիվ 2 միջնակարգ, Լեռնակերտի հիմնական դպրոցների, Աստղաձորի մանկապարտեզի կառուցման, Վերին Գետաշենի մարզադահլիճի եւ կից մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները:

Իրականացված ծրագրերի արդյունքում համայնքում էապես բարելավվել են մարդկանց կենսապայմանները, հզորացել ենթակառուցվածքները, զարգացում ապրել կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտները, բացվել նոր աշխատատեղեր:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ ԿԱՏԱՐԵԼ Է ՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը կատարել է տոնական ընդունելություն, որին մասնակցել են Գավառ համայնքի կրթամշակութային հաստատությունների տնօրենները, ավագանու անդամներ, վարչական ղեկավարներ եւ Գավառի համայնքապետարանի աշխատակազմը:

Ընդունելությունն ուղեկցվել է գալիք ամանորյա շնորհավորանքներով եւ անակնկալներով: Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի կողմից «Տարվա լավագույն տնօրենի» պատվոգրին են արժանացել Գեղարքունիքի մանկապարտեզի տնօրեն Տիրուհի Գեւորգյանը, Գանձակի երաժշտական դպրոցի տնօրեն Մարի Սիրականյանը, Գավառի գեղարվեստի դպրոցի տնօրեն Հասմիկ Թամամավեյանը:

Գավառի համայնքապետարանի լավագույն աշխատող է ճանաչվել աշխատակազմի գլխավոր մասնագետ Հակոբ Սարգսյանը:

Ալվարդ Մանուկյան

ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՍՏԱՑԵԼ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ 15 ՇԱՀԱՌՈՒ

«ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամ»-ը Մարտունու համայնքապետարանի եւ «Art House» ուսումնական կենտրոնի հետ համատեղ, իրականացրել է տնտեսական ակտիվացման ծրագիր, որի շրջանակում բազմամսյա մասնագիտական կրթություն են ստացել Մարտունի համայնքում բնակվող 15 շահառու, այդ թվում՝ Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներ:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, դասընթացներն ավարտած մասնակիցներին, որպես աջակցության մաս, տրամադրվել են նաեւ աշխատանքային գործիքներ՝ ըստ մասնագիտությունների, որոնք ստացել են վարսահարդար, մատնահարդար, դիմահարդար մասնագիտությամբ կրթվածները:

Դեկտեմբերի 27-ին Մարտունու համայնքապետարանում տեղի է ունեցել վկայագրերի, գործիքների ու խնամքի միջոցների հանձնման արարողությունը:

Շուտով նման հանդիպում կկայանա նաեւ խոհարարության, կարուձեւի դասընթացների մասնակիցների հետ:

-Ծրագրում ընդգրկված մասնակիցներն արդեն իսկ պատրաստ են՝ վստահորեն սկսել իրենց մասնագիտական ուղին,-ներկայացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

2024 ԹՎԱԿԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզում 2024 թվականին հիմնանորոգվել եւ միջին նորոգման է ենթարկվել միջպետական, հանրապետական, մարզային ու համայնքային նշանակության 125,8 կիլոմետր երկարության ճանապարհ, կառուցվել կամ հիմնանորոգվել 3 կամուրջ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Գեղարքունիքի մարզի ճանապարհաշինության ոլորտում 2024 թվականին կատարվել է շուրջ 11 միլիարդ 966 միլիոն դրամի ներդրում, որից 1 միլիարդ 576 միլիոն դրամը կազմում է համայնքների կողմից կատարված ներդրումը սուբվենցիոն ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Մնացած 10 միլիարդ 390 միլիոն դրամը հատկացվել է պետական բյուջեի միջոցներից: Միջին նորոգման է ենթարկվել Ջորավանք-Ճամբարակ-Դրախտիկ հանրապետական նշանակության ճանապարհը՝ 40,6 կիլոմետր երկարությամբ: Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հիմնանորոգվել է համայնքային նշանակության 31,1 կիլոմետր ճանապարհ:Պետական միջոցներով հիմնանորոգվել է միջպետական ու հանրապետական նշանակության 28, մարզային նշանակության 26,1 կիլոմետր երկարության ճանապարհներ:

Հիմքից կառուցվել են Ծովագյուղ-Սեմյոնովկա ավտոճանապարհը միացնող եւ Ճամբարակի Գ. Նժդեհի փողոցի կամուրջները, հիմնանորոգվել է Սեւանի տրանսպորտային հանգույցի կամուրջը:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԵԼ Է 1486 ԵՐԵԽԱ

Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհաստատություններում 2024 թվականի ընթացքում լույս աշխարհ են եկել 1486 երեխա՝ 845 տղա եւ 641 աղջիկ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչությունից, 2024 թվականի հունվարին Գեղարքունիքի մարզի բուժհիմնարկներում ծնվել է 126, փետրվարին՝ 92, մարտին՝ 88, ապրիլին՝ 103, մայիսին՝ 108, հունիսին՝ 99, հուլիսին՝ 111, օգոստոսին՝ 153, սեպտեմբերին՝ 166, հոկտեմբերին՝ 161, նոյեմբերին՝ 146, դեկտեմբերին՝ 133 երեխա:

725 երեխա ծնվել է Մարտունու ծննդատանը, 300 երեխա՝ Սեւանի, 273 երեխա՝ Գավառի, 159 երեխա՝ Գավառի բժշկական կենտրոններում, 29 երեխա՝ Ճամբարակի առողջության կենտրոնում:

2023 թվականին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում ծնվել է 1734 երեխա՝ 952 տղա, 782 աղջիկ:

Ամանորյա տոն օրերին Գեղարքունիքի մարզի բուժհիմնարկներում գրանվել է 10 ծնունդ : 2025 թվականի հունվարի 1-ին եւ 2-ին Մարտունու ծննդատանը լույս աշխարհ են եկել վեց երեխա՝ 3 տղա եւ 3 աղջիկ: Գավառի բժշկական կենտրոնում 2024 թվականի վերջին օրը ծնվել է 1 աղջիկ, հունվարի առաջին երկու օրերին՝ 1 տղա եւ 1 աղջիկ: Սեւանի բժշկական կենտրոնում 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ծնվել է 1 տղա երեխա: Վարդենիսի ԲԿ-ում եւ Ճամբարակի առողջության կենտրոնում ամանորյա տոներին ծնունդ չի գրանցվել:

1.qxd 13/01/2025 18:01 Page 5

ԴՈՒՆՈՒՇԸ

/սկիզբը՝ նախորդ համարներում/

Հավաքվածներից մեկը հարցնում էր իր տղայի, մյուսը՝ ամուսնու, երրորդը՝ եղբոր մասին: Բոլորն էլ Հայկի մեջ տեսնում են բանակում եղած իրենց հարազատներին ու ցավում նրան: Նա մասնակցել է կատաղի մարտերին, ծանր վիրավորվել ու կորցրել եղբորը: Հայկը ուշքի է եկել հիվանդանոցում, ապա մանրամասն հիշել իր հետ կատարվածը: Այնտեղից նամակներ է գրել Միշային, սակայն պատասխան չի ստացել:

Հիվանդանոցից նրան զորացրել են՝ բանակի համար ոչ պիտանի լինելու պատճառով: Նա բանակից զորացրվել է մահացու վերքով: Վիրավորվելիս վնասվել է նաեւ Հայկի սիրտը, որը հիվանդանոցում չի ապաքինվել, բժիշկները նրան տվել են Հայրենական պատերազմի երկրորդ խմբի հաշմանդամի կարգ եւ ուղարկել տուն: Գալու հենց առաջին օրվանից նա անկողին ընկավ եւ պառկեց թոնրատանը դրված միակ թախտի վրա՝ գլխավերեւում ունենալով Տիգրանի նահապետական տան մրոտ առաստաղը, որի խոռոչներից ծորում էին վիշտ ու դժբախտություն: Հայկը իր հիվանդության զգալի մասը թաքցնում էր Դունուշից ու քրոջից՝ Ռափոյից: Նրանք հույս ունեին, որ Հայկը կառողջանա եւ իրենց տունը կշենացնի: Հույս ունեին նաեւ, որ Միշան տուն կգա հաղթանակով, տուն կգա փառքով եւ շքանշաններով, հույս ունեին, որ տղաների ազնիվ ծառայությունը կնպաստի Տիգրանի անմեղության բացահայտմանը: Մոր եւ աղջկա լավատեսությունը ուսանելի էր եւ օգտակար, բայց այն նման էր մի երազի, որի մասին ասում են. «Լավ երազ է, եթե բարին կատարվի»:

Մի օր հետո նրանց տուն եկավ շրջանի սոցապ բաժնի վարիչ Արփիկ Ոսկանյանը, որը վիրավոր եւ հիվանդ զորացրվածների տներն էր լինում շրջսովետի գործկոմի նախագահ Հովհաննես Զարգարյանի հանձնարարությամբ: Անսահման բարի եւ մարդասեր Զարգարյանն աշխատակիցներին ուղարկում էր՝ ուսումնասիրելու նրանց ապրելակերպն ու միջոցները, գործադիր կոմիտե ներկայացնելու վիրավորների փաստաթղթերը՝ թոշակավորելու եւ նյութական օգնություն ցույց տալու նպատակով: Իսկ Զարգարյանի կին Սուսաննան այդպիսի տներն էր այցելում մի քանի պիոներների ուղեկցությամբ եւ տուժածներին օգնելու նպատակով դիմում էր առանձին հիմնարկների ու կազմակերպությունների ղեկավարներին՝ մի բան պոկելու եւ տուժածներին տալու համար:

Այդ բարի մարդկանց օգնությունը հատուցվում էր գյուղացիների օրհնությամբ եւ այն անկեղծ հարգանքով, որ այդ շրջանում փոխանցվում էր թոռից թոռ:

Հովհաննես Զարգարյանի նախաձեռնությամբ Հայկին իսկույն թոշակավորեցին եւ օգնեցին մթերքներով: Տեսնելով այդ հոգատարությունն ու վերաբերմունքը՝ Դունուշն ու Ռափոն իրենց զգացին մյուսներին հավասար մարդ՝ շայված ու գնահատված արժանապատվությամբ: Նրանց լավատեսությունն ու նրանից ծագող հույսերն ավելի ամրապնդվեցին:

Անցնում էին շաբաթներ ու ամիսներ, սակայն Հայկը չէր ապաքինվում, ընդհակառակը, գնալով ավելի էր ծանրանում նրա հիվանդությունը: Այնքան էր մաշվել, որ դուրս էին ցցվել այտոսկրերը, բարակ մոմի տեսք էին ընդունել բազուկները, եւ առաջվա նման չէին փայլում սեւ ու խոշոր աչքերը: Բժիշկները ոչնչով չէին կարող բարելավել երիտասարդի վիճակը:

Մռայլ ու չարագուշակ ամպերը խռնվել էին երկնքում: Չհայտարարված տխրությունը տների երդիկներից կաթում էր ցած եւ գեղջուկների տները լցնում իրենով: Իսկ Տիգրանի խղճուկ տնակից սկիզբ առնող թափորը դանդաղ ընթացքով շարժվում էր դեպի գերեզմանոց՝ ձեռքերի վրա տանելով մի անշուք դագաղ, որի մեջ ննջում էր գեղեցիկ ու սեւաչյա Հայկը: Ճանապարհին հաճախ ուշագնաց էր լինում սեւավոր Դունուշը, եւ նրան ուշքի բերելու նպատակով խմբված մարդկանց իրարանցումները խախտում էին թափորի միապաղաղությունը: Թաղմանը մասնակցում էին նաեւ Զարգարգարյանն ու Սուսաննան: Գերեզմանոց էին գնում հենակավոր Վահան Ներսիսյանն ու Գենարոս Մոսոյանը, որոնք նոր էին վերադարձել ռազմաճակատից՝ մեկական ոտքով: Տխրությունը թափվում էր մարդկանց աչքունքից, ամեն մեկի հայցքից կաթում էր անկեղծ ու երիցս անկեղծ վիշտը: Եվ ակամայից հարց է առաջանում. պատերազմի այդ ահեղ ժամանակներում սպանվելն ու մեռնելը դարձել էին սովորական երեւույթ, ինչու՞, ուրեմն, Հայկի մահն այդքան ցավ էր պատճառել մարդկանց: Երեւի այն պատճառով, որ այդ ընտանիքի հայրն ու տան հեղինակությունն անմեղ զոհ էին դարձել ամբարտավան ու բանսարկու մարդկանց ձեռքով: Եվ այն մասսայական ցավակցությունը, որ ցուցաբերվում էր այդ գերդաստանի նկատմամբ, մի անգամ եւս ցույց է տալիս ժողովրդի կերպարի վեհությունը: Երբ մեկին հարգում ու մեծարում է ժողովուրդը, ոչ մի բռնություն, ինչքան էլ դաժան լինի, չի կարող մեռցնել նրա արժանապատվությունը:

Հուղարկավորությանը մասնակցած մարդկանց մխիթարական խոսքերը սթափեցրին Դունուշին ու Ռափոյին: Նրանք երախտագիտությամբ էին լսում հարեւաններին ու համագյուղացիներին: Իսկ Հովհաննես Զարգարյանի մարմարդամոտ ու բարեկամական վերաբերմունքը սգահան անելու չափ բարերար ազդեցություն գործեց թշվառների վրա:

Մխիթարողներից շատերը ասում էին իմաստալից խոսքեր, պատմում էին ավելի մեծ դժբախտությունների մասին եւ հանգստացնում հանգուցյալի մորն ու քրոջը:

-Դու, Դունուշ ջան,- ասում էր մի պառավ կին,- քու զավակին քու ձեռքով, ազգ ու բարեկամներով թաղեցիր գյուղի գերեզմանոցում, քու պապերի ու տատերի կողքին: էդ էլ քիչ բան չէ: Ախր ոնց անենք մենք՝ ես ու Փիրուզը, Ալխասը, Ծաղիկ բաջին եւ ուրիշներ, որ մեր բալեքը գտնվում են արյան ծովի մեջ, ոչ խեր կա, ոչ խաբար: Կամ էլ ի՞նչ սեւ կապեն էն մայրերը, որոնք, «սեւ թղթերը» դրած իրենց ծոցում, ախ ու վախով մի ափ հող էին ուզում Աստծուց:

Սուսաննա Զարգարյանի գլխավորությամբ կանայք մի շաբաթ շարունակ այցելում էին դունուշին եւ զբաղեցնում նրան:

Զոհվածների ընտանիքներին օգնելու ֆոնդից գործկոմի նախագահ Հովհաննես Զարգարյանը նրանց տունն էր ուղարկել երկու պարկ ալյուր, մի պարկ ծավար եւ ուրիշ սննդամթերքներ ու կարգադրել էր կոլտնտեսության վարչության նախագահին, որ նորմալ պայմաններ ստեղծեն զոհվածի մոր եւ քրոջ նկատմամբ:

Ինչպես էլ մխիթարեին եւ ինչքան էլ օգնեին, միեւնույն է, մայարական սիրո ալեկոծված ծովը չէր հանդարտվում, եւ նրա հորձանուտ փոթորկումները կոծում էին Դունուշի մաշված սիրտը: Նա ուզում էր օր ու գիշեր հեծկլտալ որդու գերեզմանի վրա՝ ակոսավորված երեսները տրորելով թարմ շիրիմի հողոթմբին: Եվ երբ վրա էր հասնում գիշերը, երբ ամեն ինչ խաղաղվում էր, նա վերցնում էր Ռափոյին ու գնում որդու մոտ: Լալիս էին մայր ու աղջիկ, լալիս էին աղեկտուր, մինչեւ որ խզվում էր նրանց ձայնը, ապա նոր միայն վերադառնում էին տուն՝ երերուն քայլերով:

Նրանց այդ ծանր ապրումներին ավելանում էր Միշայից լուր ու տեղեկություն չունենալը, գիր ու նամակ չստանալը, իրենց տան միակ հույս ու ապավենին կորցնելու սարսափը: Բանն այնտեղ էր հասել, որ այդ կասկածանքը համակել էր նաեւ հարեւաններին, որոնք Դունուշից եւ Ռափոյից գաղտնի մտնում էին փոստը եւ ստուգում բանակից եկած նամակները՝ հուսալով, որ նրանց մեջ գտնվի Միշայից եկած որեւ-



է նամակ: Սակայն նրանք եւս վերադառնում էին դատարկաձեռն:

Զինկոմիասրիատի միջոցով հեռագիր էին ուղարկել Միշայի զորամասը, սակայն պատասխան չկար ու չկար: Տիգրանը քաղբանտարկյալ, Հայկը թաղված ծանր հողի տակ, Միշան անհայտության մեջ... Ո՞վ կարող էր տանել այդ կորուստների հեղեղած վիշտը, եթե ոչ Դունուշը, միայն ու միայն այդ դժբախտ գեղջկուհին: Ավելին, այդ բոլորի հետ միասին Դունուշը Ռափոյի հետ սկսեց իր ընդհատված աշխատանքը՝ սեւ շորորով ու սեւ լաչակով: Նա գիշերները գրեթե չէր քնում. հիշում էր այն պահը, երբ չեկիստները տարան Տիգրանին, երբ Ադոն հայհոյեց ու սպառնաց իրենց, երբ Միշան ու Հայկը վախից դողում էին վերմակի տակ: Դունուշը հիշում էր Տիգրանի չինար բոյը, Հայկի գեղեցիկ աչքերը, աշխույժ ու թռվռան Միշային, նրա կարմիր ու կլորիկ դեմքը եւ հալվում էր վառվող մոմի նման:

-Դունու՜շ մորքուր,- աչքդ լույս,- ճչալով ներս մտավ նամակատարը,- քու Միշայից նամակ եմ բերել:

-Վայ, քու արեւին մեռնիմ, քու ոտը պաչեմ,- ինքնամոռաց ծվծվաց Դունուշը եւ նամակատարի ձեռքից թռցրեց եռածալ թուղթն ու սեղմեց իր այրված սրտին:

Միշան գրում էր, որ ինքն ու Հայկը մարտի ժամանակ կորցրել են միմյանց: Գրել է նաեւ, որ ինքը երկար ժամանակ եղել է կռվի առաջին գծում եւ չի կարողացել նամակ գրել: Նա հարցում է արել, թե տղաները Հայկից նամակ չե՞ն ստացել: Այնուհետեւ նամակի վերջին մասում ավելացրել է. «Ադե ջան, թշնամու մեջքն արդեն կոտրված է, մենք արդեն սկսել ենք ջարդել այդ խոզերին: Դուք չվախենաք, հաղթանակը մերը կլինի, եւ ես ու Հայկը իրար կգտնենք, տուն կգանք միասին»:

/շարունակելի/

Արտաշ Ստեփանյան

ԿԱԽԱԿՆՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Կախակն գյուղում ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում 2024 թվականի դեկտեմբերից մեկնարկել եւ ընթանում են 144 տեղանոց կրթահամալիրի նոր շենքի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, Կախակնի կրթահամալիրի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 170 միլիոն դրամ, որը հատկացվում է «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» միջոցներից:

Կրթահամալիրն իր կազմում ունենալու է միջնակարգ դպրոց, նախակրթարան եւ մանկապարտեզ: Այն սպասարկելու է Վարդենիս համայնքի Կախակն, Տրետուք եւ Կուտական գյուղերի նախադպրոցական եւ դպրոցական տարիքի երեխաներին: Կրթահամալիրն ունենալու է արդի չափորոշիչներին համապատասխան բոլոր պայմանները:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Եվրոպա» ՍՊԸ-ն: Այժմ ընթանում են հիմքերի եւ նկուղային հարկի կառուցման աշխատանքները:

Շինարարությունը նախատեսված է ավարտել 2026 թվականի դեկտեմբերին:

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԵԼ Է 581 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի ղեկավարի կողմից 2024 թվականին քաղաքաշինության, առեւտրի և սպասարկման ոլորտներում տրվել է 581 թույլտվություն, որից 374-ը քաղաքաշինության, 207-ը՝ առեւտրի եւ սպասարկման ոլորտներում:

2024 թվականին, տարեկան կտրվածքով տրվել է 182 շինարարության, 1 քանդման, 153 ճարտարապետահատակագծային առաջադրանքի կամ նախագծման, եւ 38 շահագործման թույլտվություն:

Առեւտրի եւ ծառայությունների բնագավառում, տարեկան կտրվածքով, տրվել է ոգելից եւ ալկոհոլային խմիչքի վաճառքի 26, ոգելից ալկոհոլային խմիչքների եւ ծխախոտի արտադրանքի վաճառքի 114, հանրային սննդի կազմակերպման եւ իրացման 30, հեղուկ վառելիքի վաճառքի 21, տեխնիկական հեղուկ վառելիքի վաճառքի 2, թանկարժեք մետաղների վաճառքի 2, հոգեհանգստի ծիսակատարության ծառայության իրականացման 2, այլ արտաքին գովազդի 10 թույլտվություն:

Արմինե Ղուկասյան

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼ Է 267 ԾՆՈՒՆԴ, 314 ՄԱՀ

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Սեւանի տարածքային սպասարկման գրասենյակում ամփոփվել են 2024 թվականի տարեկան եւ 4-րդ եռամսյակի ցուցանիշները:

2024 թվականի 4-րդ եռամսյակում Սեւանի տարածքային սպասարկման գրասենյակում գրանցվել է 34 ծնունդ, 42 ամուսնություն, 10 ամուսնալուծություն, 10 հայրության ճանաչում, 81 մահ:

Կատարված մյուս գործարքների թիվը 679 է:

2024 թվականին գրասենյակում կատարվել է ծննդյան ակտի 267 գրանցում:

Ամուսնություն է գրանցել 172 զույգ: Ամուսնալուծությունների թիվը 33 է:

Հայրության որոշման ակտի գրանցումների թիվը 77 է:

ՔԿԱԳ գրանցումներում կատարված ուղղումների, լրացումների, փոփոխությունների գործարքի քանակը եղել է 238:

ՔԿԱԳ վկայականի կրկնօրինակ է ստացել 327 քաղաքացի: Տրամադրվել է 500 տեղեկանք:

2024 թվականին գրանցվել է 314 մահ:

Ընդհանուր առմամբ՝ կատարվել է 2222 գործարք:

Կատարված գործարքների դիմաց համայնքային բյուջե է մուտքագրվել 4 միլիոն 590 հազար դրամ պետական տուրք:

Արմինե Ղուկասյան

ՍԻԳԻ ԱՊՕՐԻՆԻ ՈՐՍԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Պատկան մարմինների կողմից Սեւանա լճում 2024 թվականի դեկտեմբերի 9-ից շարունակվում են սիգի ապօրինի որսի կանխարգելման խստացված միջոցառումները:

Ինչպես տեղեկացրին ՀՀ բնապահպանական եւ ընդերքի տեսչական մարմնից, ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության, ՀՀ Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի, ՀՀ Ոստիկանության աշխատակիցները սիգի ձվադրման ժամանակաշրջանով պայմանավորված որսի եւ վաճառքի արգելքի ընթացքում 2024 թվականի դեկտեմբերի 9-26-ի խստացված շուրջօրյա միջոցառումների ժամանակ հայտնաբերել եւ առգրավել են 32 լողամիջոց, 695 կգ ձուկ, 1 ապօրինի վաճառք, 3 ապօրինի տեղափոխում, 6 ձկնագողություն: Այդ ժամանակահատվածում լճից դուրս է բերվել 879 ձկնորսական ցանց, 119 խեցգետնորսիչ: Շրջակա միջավայրին պատճառված վնասի չափը կազմել է 3 միլիոն 473 հազար 830 դրամ: Հարուցվել է 3 վարչական եւ 7 քրեական վարույթ:

Առգրավված ձկները համապատասխան փորձաքննությունից հետո հանձնվել են հատուկ խնամքի կարիք ունեցող անձանց կենտրոններ: Ոչ պիտանի ձկնաքանակը ոչնչացվել է՝ սահմանված կարգի համաձայն:

Շուրջօրյա խստացված վերահսկողություն է իրականացվել նաեւ Ամանորի եւ Սուրբծննդյան տոնական օրերին, շուրջօրյա ռեժիմով:

Վարդենիս համայնքի, Կարճաղբյուր բնակավայրի լճի ափամերձ հատվածում 2024 թվականի դեկտեմբերի 30-ի գիշերը, ժամը 22-ի սահմաններում, նկատվել է լճից դուրս եկող ձկնորսական նավակ: Որսագողերը դիմել են փախուստի՝ դեպքի վայրում թողնելով ռետինե նավակ, որում առկա է եղել 560 հատ 207 կգ ընդհանուր քաշով սիգ: Ձկնապաշարին հասցված վնասը կազմել է 1 միլիոն 35 հազար դրամ:

Նյութերը փոխանցվել են իրավապահ մարմիններին:Ընթանում են իրավախախտների հայտնաբերման աշխատանքներ:

2025 թվականի հունվարի 8-ին, ժամը 20:20-ի սահմաններում նկատվել է Սեւանա լճից ափ դուրս եկող ձկնորսական նավակ:

Ծովագյուղի բնակիչներ Ղ.Գ.-ն եւ Ս.Ա.-ն սիգի որսի արգելքի ընթացքում ապօրինի որսացել էին 135 հատ 54 կգ սիգ տեսակի ձուկ:

Ձկնորսական նավակը եւ ձկնապաշարն առգրավված է, իրավախախտները տեղափոխվել են ՆԳՆ ոստիկանության բաժին:

Հունվարի 9-ին, ժամը 2:15-ի սահմաններում, Ջիլ բնակավայրի ափամերձ հատվածում ձկնագողերը, հեռվից նկատելով տեսուչներին, թողնելով 410 կգ ապօրինի որսված սիգ տեսակի ձուկ, դիմել են փախուստի:

Իրականացվում են ձկնագողերի հայտնաբերման աշխատանքներ:

ՍԵՎԱՆ-ԾԱՂԿՈՒՆՔ-ԶՈՎԱԲԵՐ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄԸ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում ՀՀ ՏԿԵ նախարարության պատվիրատվությամբ 2024 թվականի դեկտեմբերից մեկնարկել են Սեւան-Ծաղկունք-Զովաբեր հանրապետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Սեւան-Ծաղկունք-Զովաբեր ճանապարհի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 2 միլիարդ 622 միլիոն դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետական միջոցներից:

Ծրագրով նախատեսվում է ճանապարհի երթեւեկելի մասի հիմնանորոգում՝ 17 կիլոմետր երթկարությամբ ու շուրջ 110 հազար քառակուսի մետր մակերեսով, ջրահեռացման համակարգի տեղադրմամբ, բնակավայրերում՝ մայթերի կառուցմամբ: Հիմնանորոգվող ավտոճանապարհի շուրջ 8 կիլոմետրն անցնում է Ծաղկունք, Գեղամավան, Դդմաշեն, Զովաբեր բնակավայրերի ներսով՝ Սեւանի տարածարջանը կապելով Հրազդանի հետ:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Եվրոբուդ» ՍՊԸ-ն:

Անցած տարվա դեկտեմբերին իրականացվել են հողային աշխատանքներ՝ շուրջ 20 միլիոն դրամի չափով: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2025 թվականին:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԵԼ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՆ ՆՇԱՆԱԿՎԵԼ 154 ՈՒՍՈՒՑԻՉ

Գեղարքունիքի մարզի կրթական համակարգում 2024 թվականին մրցույթներում հաղթել եւ աշխատանքի են նշանակվել 154 ուսուցիչ, 4 դպրոցների տնօրեններ, 6 դպրոցների վարչատնտեսական մասի համակարգողներ:

Ինչպես տեղեկացրեց Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչության պետ Կարեն Զազյանը, 2024 թվականին հայտարարվել է 31 դպրոցների տնօրենների թափուր տեղերի համար մրցույթներ, որից հաղթող են ճանաչվել 4-ում՝ Մարտունու N 1, N 2, հիմնական , Այգուտի եւ Վահանի միջնակարգ դպրոցներում, իսկ վարչատնտեսական մասի համակարգողներ են նշանակվել Գանձակիթիվ 2, Սեւանի 4 , Լուսակունքի, Զովաբերի , Կարմիրգյուղի թիվ 1, Լիճքի հիմնական դպրոցներում: Ուսուցիչների թափուր տեղի համար հայտարարված մրցույթներում հաղթող են ճանաչվել եւ աշխատանքի ընդունվել 154 մանկավարժ, որոնցից 22-ը արցախից բռնի տեղահանված ուսուցիչներ են:

2024 թվականի ընթացքում մարզային ենթակայության հանրակրթական դպրոցների ԲՏՃՄ առարկաներ դասավանդող 810 եւ մինչեւ 100 աշակերտ ունեցող դպրոցների 315 ուսուցիչներ ստացել են հավելավճարներ, որի արդյունքում 18 դպրոցների 23 ուսուցիչ ամսական ստացել են 400000 դրամ եւ ավելի աշխատավարձ:

ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ Է ՀԱՏԿԱՑՐԵԼ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ

Գավառի քաղաքային գրադարանը եւ տարածքային ստորաբաժանման 8 գրադարանները 2024 թվականին համայնքապետարանի կողմից ստացել են կապիտալ եւ ընթացիկ դրամաշնորհներ՝ գրաֆոնդի համալրման, կահավորման եւ տեխնիկական վերազինման նպատակով:

Գավառի քաղաքային գրադարանը կապիտալ դրամաշնորհով ձեռք է բերել 173 հազար դրամ արժողության հեռուստացույց, իսկ Արծվաքարի, Հացառատի, Սարուխանի, Գեղարքունիքի, Լանջաղբյուրի, Գանձակի, Կարմիրգյուղի ու Նորատուսի տարածքային ստորաբաժանման գրադարանները՝ համակարգիչներ,տպիչներ, միացվել է ինտերնետ կապ:

Համալրվել են նաեւ այս գրադարանների գրաֆոնդերը: Գրադարաններին նաեւ գույք է տրամադրվել: Համայնքի 2024 թվականի բյուջեից հատկացվել է 3 միլիոն 925 հազար դրամ:

1միլիոն 301 հազար դրամ ընթացիկ դրամաշնորհի շրջանակներում էլ գնվել են աթոռներ, քիվեր եւ վարագույրներ: Գավառի համայնքապետարանից վստահեցնում են, որ համայնքի գադարանային պայմանների բարելավման նպատակով հատկացումները լինելու են շարունակական:

Ալվարդ Մանուկյան

ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ Է ՀԱՏԿԱՑՐԵԼ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻՆ

Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանը կապիտալ եւ ընթացիկ դրամաշնորհներ է հատկացրել Կարմիրգյուղի արվեստի դպրոցին:

Համայնքի 2024 թվականի բյուջեից կապիտալ դրամաշնորհով Կարմիրգյուղի արվեստի դպրոցին հատկացվել է 1 միլիոն 960 հազար դրամ, որի արդյունքում արվեստի դպրոցը ձեռք է բերել դաշնամուր, պրոյեկտոր, պրոյեկտորի էկրան, փոշեկուլ, բաս դուդուկ, երգչախմբի սաների համար հագուստներ եւ պարարվեստի բաժնի սաների համար՝ տարազներ:

Համայնքապետարանի կողմից տրամադրված 705 հազար դրամ ընթացիկ դրամաշնորհի շրջանակներում էլ գնվել են նկարչական մոլբերտներ եւ աթոռակներ, պարարվեստի բաժնի սաների համար կոշիկներ, պարաններ՝ դհոլների համար եւ խոսափողների ոտնակներ:

Կարմիրգյուղի արվեստի դպրոցի տնօրեն Օվսաննա Գեւորգյանի հավաստմամբ՝ դրամաշնորհների տրամադրման շնորհիվ դպրոցում բարելավվել են որակյալ ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ պայմանները:

Ալվարդ Մանուկյան

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ ԱՄԱՆՈՐՅԱ ՆՎԵՐՆԵՐ ԵՆ ՍՏԱՑԵԼ ՖՐԱՆՍԱՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ամանորի եւ Սուրբծննդյան տոներին ընդառաջ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի փոքրիկները նվերներ են ստացել ֆրանսահայ բարեգործական կազմակերպության կողմից:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպությունը այս տարեմուտին եւս Վարդենիս համայնքում հանդես է եկել հերթական մարդասիրական նախաձեռնությամբ՝ իրականացնելով գեղեցիկ տոնական ծրագիր: Ծրագրի շահառուները եղել են Վարդենիս համայնքի տարբեր բնակավայրերի շուրջ 1500 երեխաներ՝ սոցիալապես անապահով եւ Արցախյան պատերազմներում զոհվածների ընտանիքներից: Նրանք ստացել են քաղցրավենիքով եւ սննդամթերքով լի արկղեր:

Նվերները բաժանվել են բնակավայրերի կրթական հաստատություններում կազմակերպված ամանորյա միջոցառումների ժամանակ, որոնց մասնակցել են Վարդենիսի համայքնապետարանի աշխատակիցները եւ «Բարձունք 5165» կազմակերպության ներկայացուցիչները:

1.qxd 13/01/2025 18:01 Page 7

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆ ԱՄՓՈՓԵԼ Է ՄԱՐԶԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում մարզական տարին ամփոփվել է լուրջ ձեռքբերումներով:

Սեւանցի մարզիկները 2024 թվականին մասնակցել են հանրապետական, համահայկական, միջազգային առաջնություններին եւ մրցաշարերին, իսկ նրանցից շատերը Սեւան են բերել մեդալներ:

Սեւանի Ն. Դագարյանի անվան մարզադպրոցի ծանրամարտի խմբի սան Հովհաննես Հովհաննիսյանը Վանաձոր քաղաքում կայացած ծանրամարտի բաց առաջնությանը գրավեց 1-ին մրցանակային տեղը: Չի ուշացել նաեւ հաջորդ հաղթական մեդալը:

Մարզիչ Գառնիկ Աբրահամյանի սանը Պերուի Լիմա քաղաքում կայացած աշխարհի ծանրամարտի պատանիների առաջնությանը նվաճել է փոխչեմպիոնի կոչում, որին հաջորդել է Հունաստանի Սալոնիկ քաղաքում կայացած Եվրոպայի պատանիների առաջնության ոսկե մեդալը:

Ծանրամարտի մարզիչ Գառնիկ Աբրահամյանի համար եւս 2024 թվականը հաղթական էր. Լեհաստանի Պաբյանիցե քաղաքում կայացած WPA վարկածով պաուերլիֆտինգի աշխարհի գավաթի մրցումներից նա վերադարձել է՝ 1-ին մրցանակային տեղ գրաված:

Բռնցքամարտի մարզիչներ Հովիկ Վարդանյանի եւ Անդրանիկ Քամալյանի սաներ Կարինե Դալլաքյանը եւ Միքայել Պետրոսյանը Հայաստանի բռնցքամարտի պատանիների առաջնությունից տուն են վերադարձել ոսկե մեդալներով:

Վրաստանի մայրաքաղաքում կայացած բռնցքամարտի միջազգային առաջնությունը հաղթական էր Միքայել Պետրոսյանի, Ալեք Մանուկյանի, Նարեկ Կարոյանի, Դավիթ Բարսեղյանի համար, որոնք նվաճել են 1-ին մրցանակ:

Առաջնությունում 2-րդ մրցանակակիրներ են դարձել Էդգար Ամոեւը եւ Հրանտ Դավթյանը:

Թաեքվոնդոյի մարզիչ Խաչիկ Թորոսյանի սանը՝ Դավիթ Թորոսյանը, շարունակել է իր հաղթական մրցելույթները նաեւ անցնող տարում:

Երեւանում կայացած ՀՀ թաեքվոնդոյի մեծահասակների առաջնությունում Դավիթը դարձել է 1-ին մրցանակակիր եւ 7-ակի չեմպիոն, իսկ Եվրոպայի համալսարանական խաղերում (G-1) նվաճել բրոնզե մեդալ:

Մարզիչ Արման Գրիգորյանի սան Նարեկ Նավասարդյանը Երեւանում կայացած երիտասարդների առաջնությանը դարձել է փոխչեմպիոն:

Մարզադպրոցի սան Ռազմիկ Շուշանյանի համար տարին մեդալառատ էր: Մարզիչ Էդգար Ղարիբյանի սանը Երեւանում կայացած K-1 WAK-1F քիքբոքսինգի մրցաշարում դարձել է ոսկե մեդալակիր, Թաիլանդական բռնցքամարտի միջազգային IFMA Erevan open առաջնությունում, K-1 WAK-1F միջազգային առաջնությունում, K-1 միջազգային մրցաշարում, Հայաստանի K-1 WAK-1F բաց առաջնությունում եւս լավագույնն էր, իսկ արդյունքը ոսկե մեդալներն են:

Այս առաջնություններում քիքբոքսինգ մարզաձեւի մարզիկներ Հովսեփ Ղարիբյանը, Լեւոն Խաչատրյանը, Ալբերտ Գրիգորյանը, Վահե Խաչատրյանը եւս հանդես են եկել լավագույնս, մեր մարզիկների համար առաջնությունները եղել են մեդալառատ՝ ոսկե եւ արծաթ մեդալների տեսքով:

Սեւանի ջրային մարզաձեւերի մանկապատանեկան մարզադպրոցի մարզիկների համար եւս անցնող տարին նշանակալից էր եւ մեդալառատ:

Արա Վիրաբյանը եւ Վահե Դավթյանը, Գեւորգ Փիլոսյանը, Նորիկ Մարգարյանը ՀՀ մեծահասակների առաջնությանը թիավարություն, բայդարկա եւ կանոէ մարզաձեւում գրավել են 1-ին մրցանակային տեղեր:

Վահե Դավթյանը, Արա Վիրաբյանը մասնակցել են աշխարհի մեծահասակների առաջնությանը, որը կայացել է Ուզբեկստանում:

Գեւորգ Փիլոսյանը եւ Նորիկ Մարգարյանը Հունգարիայում մասնակցել են Եվրոպայի մեծահասակների առաջնությանը:

Արթուր Պետրոսյանը մասնակցել է թիավարություն պարականոէ մարզաձեւի Եվրոպայի առաջնությանը:

Առագաստանավային մարզաձեւում եւս գրանցվել են հաջողություններ. Նարե Սուքիասյանը 2024 թվականի ՀՀ առաջնությունում դարձել է 1-ին մրցանակակիր:

Նարեն 1-ին մրցանակակիր է դարձել նաեւ Ծովակալ Իսակովի անվան միջազգային մրցաշարում, իսկ Թբիլիսիում կայացած առաջնությունում գրավել է 3-րդ տեղը, մասնակցել է նաեւ Գելենջիկյան միջազգային մրցաշարին:

Գագիկ Սարգսյանը ՀՀ Մեծահասակների առաջնության 1-ին մրցանակակիր է, Գելենջիկյան միջազգային մրցաշարի մասնակից:

Ավետիք Մաթեւոսյանը ՀՀ մեծահասակների առաջնությանը իր թիմին բերել է հերթական ոսկե մեդալը:

Արմինե Ղուկասյան

«ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑԱՇԱՐԻ ՀԱՂԹՈՂԸ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՄՆ Է

Նոյեմբերի 22-ից դեկտեմբերի 14-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում անցկացվել են «Մարտունու համայնքապետի գավաթ» ֆուտբոլի մրցաշարի հանդիպումները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, մրցաշարին մասնակցության հայտեր էին ներկայացրել Մարտունի համայնքի Ծակքար, Վերին Գետաշեն, Երանոս, Վաղաշեն, Ներքին Գետաշեն, Լիճք, Արծվանիստ, Մարտունի բնակավայրերի թիմերը:

Եզրափակիչ փուլի հանդիպումները կայացել են դեկտեմբերի 14-ին, Լիճք բնակավայրի դպրոցի մարզադաշտում, որի ընթացքում Մարտունու եւ Լիճքի ֆուտբոլային թիմերը պայքարել են 1-ին եւ 2-րդ տեղերի համար, իսկ 3-րդ տեղի համար մրցել են Ներքին Գետաշենի եւ Արծվանիստի թիմերը: 1-ին հորիզոնականը նվաճել է Մարտունու թիմը, 2-րդ տեղում Լիճքի, 3-րդ տեղում Ներքին Գետաշենի ֆուտբոլային թիմերն են զբաղեցրել:

Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի կողմից լավագույն երեք թիմերը պարգեւատրվել են գավաթներով, պատվոգրերով եւ դրամական պարգեւներով, համապատասխանաբար՝ 200.000, 150.000, 100.000 դրամով:

«Մարտունու համայնքապետի գավաթ» մրցաշարն անցկացվում էր առաջին անգամ:

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ԿԱՏԱՐԵԼ Է ՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը կատարել է տոնական ընդունելություն՝ պարգեւների արժանացնելով մարզամշակութային ոլորտում աչքի ընկածներին:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, Ահարոն Խաչատրյանը ընդունել է վարդենիսցի փոքրիկ շախմատիստ Սաղաթել Թադեւոսյանին, ով վերջերս մասնակցել էր Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տանը կայացած Հայաստանի պատանիների մինչեւ 10 տարեկան մասնակիցների եզրափակիչ մրցաշարին եւ 9 խաղից հավաքելով 7.5 միավոր զբաղեցրել պատվավոր 1-ին հորիզոնականը: Համայնքի ղեկավարը պատանի շախմատիստին պարգեւատրել է շնորհակալագրով ու դրամով:

Ահարոն Խաչատրյանի հյուրն են եղել նաեւ Վարդենիսի Մհեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատի տնօրեն Արմեն Խաչատրյանը, մշակույթի պալատի ավագ մեթոդիստ, ասմունքի խմբի ղեկավար Հերմինե Մովսիսյանը եւ խմբի սաները՝ Հասմիկ Ղասաբյանը, Նորայր Ավետիսյանը, Տաթեւ Կարոյանը, ովքեր, մասնակցելով «Global International Art Fest» միջազգային մրցույթ-փառատոնին, զբաղեցրել են 1-ին պատվավոր հորիզոնականները եւ արժանացել հատուկ մրցանակների:

Համայնքի ղեկավարը ջերմորեն շնորհավորել է ներկաներին, շնորհակալություն հայտնել՝ Վարդենիս համայնքի պատիվը բարձր պահելու համար, եւ նրանց արժանացրել շնորհակալագրի ու դրամական խրախուսանքի:

ՃԱՄԲԱՐԱԿՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՈՐԾՈՂ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՀԱՍՆԻ 66 ՄԵԳԱՎԱՏՏԻ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում 2025 թվականին գործող արեւային ֆոտովոլտային կայանների ընդհանուր հզորությունը կհասնի 66 մեգավատտի:

Ինչպես տեղեկացրեց Ճամբարակ համայնքի ղեկավարի խորհրդական Սուլիկո Շուշանյանը, 2024 թվականին Ճամբարակում գործել են 46 մեգավատտ ընդհանուր հզորության արեւային ֆոտովոլտային կայաններ, որոնք միացված են եղել ընդհանուր ցանցին: Իսկ նույն տարում Աղբերք գյուղի տարածքում տարբեր ընկերությունների կողմից մեկնարկել ու այժմ ավարտական փուլում են գտնվում մի քանի արեւային ֆոտովոլտային կայանների կառուցման աշխատանքները, որոնց ընդհանուր հզորությունը շահագործումից հետո կկազմի 20 մեգավատտ:

-Այսպիսով, այս տարի մենք արդեն կունենանք ընդհանուր ցանցին միացված 66 մեգավատտ հզորության արեւային կայաններ, որոնք էականորեն բարձրացնում են մեր էնեգետիկ անվտանգությունը, ավելացնում այլընտրանքային էներգիայի արտադրության հնարավորությունները: Արեւային ֆոտովոլտային կայանները գործում են Ճամբարակ համայնքի Շողակաթ, Աղբերք, Արտանիշ եւ Ծափաթաղ բնակավայրերում,- ներկայացրեց Սուլիկո Շուշանյանը:

«Գեղամա աշխարհ»

ՍԵՎԱՆՅԻ ՈՒԺԱՅԻՆ ԵՌԱՄԱՐՏԻԿ ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱԿՈԲՅԱՆԸ «ԴՅՈՒՅԱԶՆԱԳՐՔԻ» ՀԵՐԹԱԿԱՆ ՌԵԿՈՐԴԻՆ Է ՍԱՀՄԱՆԵԼ

Սեւանցի ուժային եռամարտիկ, միջազգային մրցաշարերի բազմակի հաղթող, «Դյուցազնագրքի» բազմակի ռեկորդակիր Վարազդատ Հակոբյանը հերթական ռեկորդն է սահմանել՝ ցուցադրելով արտասովոր նոր գործողություն:

Վարազդատը 120 կիլոգրամանոց ծանրաձողը պարաններով կապած ուդաստակներին հագցրած վիճակում տեղից պոկել ու բարձրացրել է մինչեւ գոտկատեղ, ապա նույն դիրքում անշարժ պահել այնքան ժամանակ, մինչեւ որ հասցրել է պատռել իր ձեռքի ափերում պահած 1 տուփ խաղաթերը:

Ռեկորդը գրանցել է «ՀՀ Դյուցազնագրքի» հիմնադիր նախագահ Վարդան Թովմասյանը:

Վարազդատ Հակոբյանի հավաստմամբ՝ ինքը հիմա պատրաստվում է սահմանել աշխարհի նոր ռեկորդ՝ ձեռքերով տեղաշարժելով 200 տոննա կշռող վագոնների շարասյուն: Ռեկորդը մարզիկը նվիրելու է Գեղարքունիքի մարզին:

«Գեղամա աշխարհ»

1.qxd 13/01/2025 18:01 Page 8

ԳԱՎԱՌԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԸ ՆԿԱՐԱԶԱՐԴԵԼ ԵՆ ՍԵՐԲ ԳՐՈՂ ՆԵԴԵԼԻԿՈ ԹԵՐԶԻՉԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԳԻՐՔԸ

Գավառի գեղարվեստի դպրոցի սաները նկարազարդել են սերբ գրող Նեդելիկո Թերզիչի պատմվածքների գիրքը:

Ինչպես տեղեկացրեց Գավառի գեղարվեստի դպրոցի տնօրեն Հասմիկ Թամամավեյանը, Գավառի գեղարվեստի դպրոց էին այցելել գրող, հրապարակախոս, ՀՀ Գրողների միության Գեղարքունիքի մարզային բաժանմունքի ղեկավար Տիգրան Նիկողոսյանը եւ բանաստեղծ, թարգմանիչ, սերբագետ, ՀՀ-ում Սերբիայի Հանրապետության պատվավոր հյուպատոս Բաբկեն Սիմոնյանը:

Այցի առիթը, Գավառի գեղարվեստի դպրոցի սաներին իրենց իսկ նկարազարդումներով, սերբիացի բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ Նեդելիկո Թերզիչի հայերեն թարգմանված «Զվարճալի օլիմպիադա» պատմվածքների գրքի հանձնման հանդիսավոր արարողությունն իրականացնելն էր:

Նախաձեռնությունը կյանքի էին կոչել Տիգրան Նիկողոսյանը եւ Բաբկեն Սիմոնյանը:

Մինչ գրքերի հանձնումը նրանք ներկայացրել են նախաձեռնության պատմությունը եւ իրենց գոհունակությունը հայտնել Գավառի գեղարվեստի դպրոցի տնօրինությանը՝ կայացած համագործակցության համար:

Գրքերի հանձնումը գեղարվեստի դպրոցի սաներին ուղեկցվել է ոգեւորիչ այլ ելույթներով եւ շնորհավորանքներով:

Ալվարդ Մանուկյան

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանում տեղի է ունեցել Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեի նախագծի հանրային լսում, որը վարել են համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը, տեղակալներ Գրիգոր Բոշյանն ու Մուրադ Մովսիսյանը:

Ինչպես տեղեկացրին Գավառի համայնքապետարանի աշխատակազմից, բյուջեի նախագիծը ներկայացրել եւ ներկաներին հետաքրքրող հարցերին պատասխանել է համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման եւ հավաքագրման բաժնի պետ Տիգրան Բրսիկյանը:

Հանրային լսմանը մասնակցել են համայնքապետարանի ենթակա կազմակերպությունների աշխատակիցներ, ՀԿ-ների ներկայացուցիչներ, շահագիգռ այլ անձինք:

Ըստ բանախոսի՝ Գավառ համայնքի վարչական բյուջեն, եկամուտների եւ ծախսերի մասով, նախնական թվերով, կազմել է 3 միլիարդ 31 միլիոն 500 հազար դրամ, որը, ըստ անհրաժեշտության, կարող է ենթարկվել փոփոխության: Բյուջեի նախագիծը կքննարկվի եւ կընդունվի Գավառ համայնքի ավագանու նիստում, 2025 թվականի հունվարին:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՀՈՒՆՎԱՐԻ 8-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԲԱՐՁՐ Է ՄՆՈՒՄ 22 ՍԱՆՏԻՄԵՏՐՈՎ

Սեւանա լճի մակարդակը նախորդ տարվա հունվարի 8-ի դրությամբ բարձր է մնում 22 սանտիմետրով:

Ինչպես տեղեկացրին ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոն»-ից, 2025 թվականի հունվարի 8-ին Սեւանա լիճը ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 38 սանտիմետր բարձրության վրա՝ նախորդ տարվա նույն օրը գրանցված 1900 մետր 16 սանտիմետր նիշի դիմաց:

Այս տարվա առաջին ութ օրերի ընթացքում Արփա-Սեւան թունելային ջրտարով, ներառյալ, ստորերկրյա հոսքը, Սեւանա լիճ է տեղափոխվել 434 հազար խորանարդ մետր ջուր:

Սեւանա լիճ թափվող գետերը գտնվում են ձմեռային սակավաջրության փուլում:

ՀՈՎՀԱՆՆԵՍԱՊԱՏՈՒՄ

Կոթավանքի գերեզմանոցում հուղարկավորությունից հետո մի անհամ ու տհաճ մարդ մոտենում է Հովհաննեսին ու հարցնում, թե ինչ թերություններ կան: Նա պատասխանում է.

- Ամեն ինչ կարգին է, ցանկապատը, խաչքարերը, կիսավեր եկեղեցին /այն ժամանակ դեռեւս վերանորոգված չէր/, գերեզմանոցի դիրքը, ափսոս, ննջեցյալների շարքում մի մարդ է պակասում, իսկ առանձին տեղերում՝ նոսր են:

***

Հարեւան Զուռնաչյան Աշոտը Ռուսաստանից նոր էր եկել, հանդիպում է Հովհաննեսին, հարցնում՝ ոնց ես:

-Լավ չեմ, Աշոտ ջան, ոտքս ցավում է,- հանում է կոշիկի մեկ թայը, նասկին արտաքինից մաքուր է, ոչինչ չկա:

Կողքին կանգնած տիկին Մարգարիտը միջամտում է, թե՝ ճիշտ չի ասում, որ ոտքը ցավում է, բա ոնց է փախչում, գնում խմելու:

Աշոտը՝ թե ապեր, կամաց գնանք մեր կողմ, ոտքդ բուժենք:

-Վայ, Աշոտ ջան,- ասում է կինը,- էսօր հազիվ եմ օյաղ բռնել, պիտի լողացնեմ:

-Լավ, էդ դեպքում ես դեղորայքը կուղարկեմ, դու ինքնաբուժում կընդունես,- եզրափակում է հարեւանը:

«Դեղը» տեղ է հասնում լողանալու պահին, վանայում անցկացնելով նաեւ ոտքի ցավը:

***

Մի տարի աշնանը Հովհաննեսը գնում է Շիրազլու /Ոսկետափ/ իր մեծ եղբայր Զալիբեկի տուն: Խմիչքների պատրաստման սեզոնն է լինում: Ուշ երեկոյան երկու եղբայրների քեֆն արդեն լավ է լինում, ուստի Զալիբեկի կին Սոնան հասկացնում է, որ հերիք է խմեն, շարունակությունը՝ մյուս օրը:

Բայց, պայմանավորվածության համաձայն, եղբայրներով կեսգիշերին գաղտնի իջնում են մառան, որտեղ դրված էին տակառներ, տակառիկներ, շտոպներ, տարբեր չափի շշեր եւ այլն: «Հարձակվում են» շտոպներ վրա. մեկը Զալիբեկն է դնում բերանին, մյուսը՝ Հովհաննեսը, ու խմում են:

- Վա՜յ,- ասում է Զալիբեկը,- բան չհասկացա , իսկ դու՞, Հովհաննես:

Իսկ սա խմում էր, դեռ չէր հագեցել: Պարզվում է, որ մեծ եղբորը ընկել է թորած ջուր, իսկ փոքրին՝ սպիրտ: Առավոտյան գաղտնիքը բացահայտվում է, դառնում անեկդոտ, թե՝ երկու ախպեր գիշերով գնացել են մարտի դաշտ, պատյաններից թրերը քաշել են. Զալիբեկի թուրը փայտից է եղել, իսկ Հովհաննեսինը՝ պողպատյա, բրխկան...

***

Հովհաննեսը Թորգոմ Հովնիկյանի հետ գնում է դարերի բոստանը՝ վարելու: Մարգարիտը հավ է մորթում-եփում, մեկ շիշ օղի դնում, երկու տարբեր չափսի բաժակ, կարծելով, թե մեծ բաժակը կտա տրակտորիստին:

Վարից հետո նստում են հացի, տեսնում երկու տարբեր բաժակներ:

-Թորգոմ ջան, ոնց անենք,- հարցնում է Հովհաննեսը:

- Ափեր Հովհաննես, դու գիտես:

Հովհաննեսը թե՝ արի վիճակ քաշենք, ում կոտրված լուցկին ընկավ՝ նա փոքրով խմի: Հովհաննեսը պահում է, վիճակ ընկնում է տրակտորիստին: Մեծ բաժակով խմող Հովհաննեսի քեֆը լավանում է, ազնվորեն Խոստովանում է, որ լուցկու հատիկներից երկուսն էլ կոտրված էր:

-Ընձի Աշխի ծուռ կըսեն, բա,-ծիծաղում է Հովհաննեսը:

-Ես էլ հավը կերել, քեզ բան չեմ թողել, ընձի լէ Մեյմունի Թորգոմ կըսեն, բա,-վրա է բերում Թորգոմը: Հաշիվ դառում է ոչ ոքի՝ 1:1:

***

Հիմնարկում ընդմիջման ժամ է, բայց ոչ մեկի մոտ փող չկա: Ոմանք տանից բերածով են սնվում, մի մասն էլ գնում են տները: Վերադառնալուց հետո անկեղծ պատմում են, թե ով ինչ է կերել: Հովհաննեսը թե՝ ես հաց փաթաթեցի հացի մեջ , կերա: Ընկերները թե՝ չհասկացանք: -Տունը բան չկար, պանիր էլ չկար, Մարգարիտ ըռշտայով փլավ էր եփել, լցրի հացի մեջ, կերա /առանց խմիչքի/:

***

Մութ ու ցուրտ, կիսաքաղց տարիներին /Տեր-Պետրոսյանի 90-ական թվականները/ հաց ճարելը պրոբլեմ էր, միս գոյություն չուներ: Հովհաննեսը գալիս է տղայի տուն, թե մի բան կլնի, կուտեմ: Հարսը հրավիրում է սեղան, թե՝ հայրիկ, տաք ճաշ կա, լցնեմ, կեր /անմիս բորշչ/: -Հա, Անահիտ ջան, լցրու, բյաց երկու կտոր մսից ավել չլցնես... Հարեւանուհի Մարգարիտը, որն այդտեղ է լինում այդ պահին, մինչեւ օրս ժպիտով է հիշում այդ պահը:

***

Մի անգամ երեկոյան գյուղ գնալիս գինովցած Հովհաննեսը մոտենում է «Հայտրանսի» պատին եւ ջուր թափում: Մոտակա պատուհանից նկատում են ու նախատում թե՝ անհարմար չէ՞, մեծ մարդ ես, էլ ուրիշ տեղ չկա՞ր: Հովհաննեսը թե՝ ձեզ ո՞վ է ասում ձեր գրասենյակը իմ «ապրանքի» տակ սարքեք:

***

Զմռան մի օր Հովհաննեսի հարեւանի անասունները տանում են «ցածի առուն» ջրելու: Անասուններից մեկը սառցակալած ճանապարհին սայթաքում-ընկնում է: Հովհաննեսն այդ պահին հանդիպում, օգնում, բարձրացնում է: Հարեւանուհի Սոնեն գեղջկական պարզամտությամբ ասում է.

- Վայ, Հովհաննես ջան, իմալ որ դու իմ կովին վերցիր, ըմալ էլ աստված քեզի վերցու:

- Հա, մորքուր ջան, քեզնից հետո թող ընձի էլ վերցնի,- լինում է պատասխանը:

***

Զմեռվա կեսին անասնակերը վերջանալով է: Մեծ տղան՝ Ռաֆիկը, թե՝ հայրիկ, խոտը պրծնում է, ի՞նչ անենք: Հովհաննեսը ելքը գտնում է.

- Սոլոմից հետո կովերի աչքերին կանաչ ակնոց դիր, հան դուրս, ձյան վրա թող արածեն:

***

Շրջանային կուսակցական-տնտեսական ակտիվի ժողով էր, որին մասնակցում էին շրջանի հիմնարկ ձեռնարկությունների ղեկավարներ, գլխավոր մասնագետներ, կուսկազմակերպությունների քարտուղարներ, Երեւանից հյուրեր, մամուլի ներկայացուցիչներ: Շրջսովետի գործկոմի 4-րդ հարկի նիստերի դահլիճում ասեղ գցելու տեղ չկար: Ընդմիջման ժամանակ գլխավոր հաշվապահին է մոտենում Երանոսի սովխոզի տնօրեն Զալալ Մանուկյանը, կեսկատակ, Հովհաննեսին ասում, թե՝ կարո՞ղ ես ճանշին շրջանային գրասենյակի պետ Սուրեն Նավոյանին մի քաղցր խոսք ասել: Հովհաննեսը, որն ուներ արծաթափայլ եւ խիտ մազեր, մոտենում է ճաղատ ընկերոջը եւ սանր խնդրում:

-Հովհաննես ջան,- առանց երկմտելու ասում է Նավոյանը,- գնա քո տղա Դարվինից սանր ուզի: Իսկ տղան, որն այդ ժամանակ աշխատում էր շրջկոմի կազմբաժնի վարիչ, նույնպես մազազուրկ էր...

Հավաքեց Դարվին Հովհաննիսյանը
Գ. Ներքին Գետաշեն

ԳԵՂԱՄԱ աշխարհ
Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 13. 01. 2025 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: